

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Դ Ի Տ Ո Ր Դ Ի Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

Հ Ա Ն Ր Ա Ք Վ Ե

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թ.

Սույն ձեռնարկը հրապարակվել է «Հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան: Այն կազմվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կողմից՝ «Հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա:

ՔՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
2. ԴԻՏՈՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՍԿԱԾԸ...
3. ԴԻՏՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ
4. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ.
5. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Դիտորդական առաքելության նպատակը հանրաքվեի գործընթացի վերաբերյալ հավաստի տեղեկությունների հավաքումն է և դրանց հիման վրա *անկախ եզրակացության* կազմումը: Դիտորդական առաքելությունն իրականացվում է դիտորդների միջոցով՝ պահպանելով չեզոքության, անկողմնակալության և հանրաքվեի գործընթացներին չմիջամտելու սկզբունքները:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հանրաքվեի ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

✓ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կուսակցությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ հանրաքվեն անցկացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների օրը.

✓ միջազգային կազմակերպությունները.

✓ օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները.

✓ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որպես դիտորդ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներ ընդգրկվել չեն կարող:

Միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները և օտարերկրյա հասարակական կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել հրավերի առկայության դեպքում, հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

Նշված կազմակերպություններին և անձանց դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունք ունեն՝

✓ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը.

✓ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը.

✓ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետը.

✓ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը:

Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների՝ հանրաքվեի վերաբերյալ գեկույցները տեղադրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում (www.cecokr.am):

ԴԻՏՈՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾԸ

Դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

Հավատարմագրվելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով են ներկայացվում հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ տեղական դիտորդների համար և մինչև քվեարկության նախորդ օրը՝ միջազգային դիտորդների համար:

Դիտորդների լիազորությունները դադարում են հանրաքվեի արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ 8-րդ օրը, եթե հանրաքվեի արդյունքները դատարան չեն բողոքարկվել: Հանրաքվեի արդյունքները դատարան բողոքարկվելու դեպքում դիտորդների լիազորություններն ավարտվում են դատական ակտի հրապարակման օրվա հաջորդ օրը, եթե վերաքվեարկություն չի նշանակվել: Վերաքվեարկության դեպքում դիտորդների վերագրանցում չի պահանջվում:

ԴԻՏՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Դիտորդն իրավունք ունի՝

✓ ներկա լինել հանրաքվեի հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում, եթե ունի դիտորդի հավատարմագրման վկայական:

Հանրաքվեի հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող են ներկա լինել յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև երկու դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ, իսկ տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ մեկ դիտորդ:

✓ Միջազգային դիտորդը հանրաքվեի հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա լինել, եթե ունի հավատարմագրման վկայական: Դիտորդը պարտավոր է դիտորդի հավատարմագրման իր վկայականը տեսանելի ձևով կրել վերնազգեստի վրա:

✓ Հանձնաժողովի նախագահն արգելում է հանրաքվեի հանձնաժողովներում, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև վերնազգեստի վրա առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունը հանրաքվեի հանձնաժողովում (տեղամասային կենտրոնում):

✓ Յանրաքվեի հանձնաժողովի նիստերին դիտորդի ներկայությունը արձանագրվում է հանրաքվեի հանձնաժողովի կողմից:

✓ Քվեարկության օրը տեղամասային կենտրոն (քվեարկության սենյակ) դիտորդի այցելության դեպքում համապատասխան գրառում է կատարվում հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում (նշվում է կազմակերպության անվանումը, դիտորդի անունը, ազգանունը և տեղամաս մուտք գործելու և տեղամասից հեռանալու ժամը):

Դիտորդն իրավունք ունի՝

✓ հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին:

Դիտորդները կարող են տպագրության ողջ ընթացքում տպագրատանը հետևել քվեաթերթիկների տպագրմանը, իրենց միջոցներով ուղեկցել քվեաթերթիկները հանրաքվեի տեղամասային հանձնաժողով, իսկ քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո՝ հանրաքվեի փաստաթղթերը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովից հանրաքվեի տարածքային հանձնաժողով տեղափոխող մեքենան:

Դիտորդները կարող են քվեարկության նախորդ օրը հանրաքվեի տարածքային հանձնաժողովում հետևել քվեաթերթիկները հանրաքվեի տեղամասային հանձնաժողովներին հատկացնելու գործընթացին, դրանց պահպանմանը, քվեարկությանը նախորդող և քվեարկության օրը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովում չմիջամտելով հանձնաժողովի աշխատանքներին, հետևել քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:

Դիտորդն իրավունք ունի՝

✓ անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, հանրաքվեի հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ հանրաքվեի հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող հանրաքվեի փաստաթղթերին, հանրաքվեի հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների (*այսուհետ՝ ընտրող*) ցուցակները կազմող լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից:

Յանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների ամփոփման, իսկ հանրաքվեի տարածքային հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների վերահաշվարկի գործընթացը կազմակերպում են այնպես, որ դիտորդները հնարավորություն ունենան անարգել հետևել քվեաթերթիկների վավերականության որոշման, քվեաթերթիկների տեսակավորման և հաշվարկման գործընթացներին:

Դիտորդը կարող է լուսանկարահանել, տեսանկարահանել հանրաքվեի հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև քվեարկության ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը և քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:

! Ընտրողների ստորագրած ցուցակները չեն կարող լուսանկարահանվել և տեսանկարահանվել:

Դիտորդի պահանջով նրան տրվում է հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Դիտորդն իրավունք ունի՝

✓ բողոքարկել հանրաքվեի հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը, եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի «Հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները:

Դիտորդն իրավունք ունի՝

✓ ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար:

Դիտորդը քվեարկության օրը հետևում է հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքներին և կարող է հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները:

! Դիտորդն իրավունք չունի միջամտելու հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքներին կամ վերջիններիս կողմից որոշումների ընդունմանը:

Դիտորդի իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ հանրաքվեի հանձնաժողովները) իրավունք չունի դիտորդին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրան մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց, բացառությամբ նրան ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:

Դիտորդը պարտավոր է պահպանել «Հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջները: Դիտորդական առաքելություն իրականացնելու շրջանակներում դիտորդն իրավունք չունի կատարել միջազգային իրավունքի նորմերին հակասող կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսդրությամբ չսահմանված գործառույթներ:

Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները հանրաքվեի վերաբերյալ իրենց զեկույցները ներկայացնում են հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով, իսկ միջազգային դիտորդական կազմակերպությունները՝ նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի գործողությունները քվեարկության նախորդ օրը

Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովը վիճակահանությամբ որոշում է քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի երեք անդամի, ովքեր պարտավոր են այդ օրը՝ մինչև **ժամը 24.00-ն**, ստորագրել բոլոր քվեաթերթիկների հակառակ կողմում:

!Քվեաթերթիկներն ստորագրելու ընթացքում հանձնաժողովի անդամը ստորագրման իր ընտրած տարբերակը փոխել չի կարող:

Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի գործողությունները քվեարկության օրը

Քվեարկության օրը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նիստը տեղամասային կենտրոնում սկսվում է ժամը **7.00-ին**:

Հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ որոշում է հանձնաժողովի անդամների միջև աշխատանքային պարտականությունների բաշխումը:

Մինչև տեղամասային կենտրոնի բացումը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահը քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ.

✓ հանում է փաթեթավորված կնիքը, քվեաթերթիկները, ընտրողների ցուցակները,

✓ ստուգում է փաթեթավորված կնիքի փաթեթի անձեռնմխելիությունը, բացում է փաթեթավորված կնիքը, գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը,

✓ ստուգում է քվեատուփի դատարկ լինելը, փակում և կնքում է քվեատուփը(անհրաժեշտության դեպքում նաև՝ շրջիկ արկղը),

✓ ընտրողների ցուցակները հանձնում է ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամ(ներ)ին, քվեաթերթիկները՝ քվեաթերթիկ հատկացնող անդամ(ներ)ին, կնիքը՝ քվեաթերթիկը կնքող անդամին:

Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:

ժամը 8:00-ին հանրաքվեի տեղամասը հայտարարվում է բացված և թույլատրվում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Ընտրողների գրանցումը

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող պետք է գրանցվի հանձնաժողովի գրանցման համար պատասխանատու անդամի մոտ գտնվող ընտրողների ցուցակում՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ ընտրողը չի կարող քվեաթերթիկ ստանալ և քվեարկել:

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նա իրավունք ունի դիմելու այլ քաղաքացու օգնության, բացառությամբ հանրաքվեի հանձնաժողովի անդամների:

2. Քվեաթերթիկ ստանալը

Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամին, որը քվեաթերթիկը հանձնում է ընտրողին:

3. Քվեաթերթիկը կնքելը

Քվեաթերթիկը կնքող հանձնաժողովի անդամը համոզվում է ընտրողի՝ տվյալ հանրաքվեի տեղամասում հաշվառված լինելու մեջ և կնքում է քվեաթերթիկը:

4. Քվեարկությունը

Ստանալով հանրաքվեի մեկ քվեաթերթիկ՝ ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

! Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում:

Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:

Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի հանրաքվեի հանձնաժողովի անդամ:

! Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի:

Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար:

Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ, ընտրողների ցուցակում կատարվում է համապատասխան նշում տվյալ ընտրողի անվան, ազգանվան դիմաց: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկն անհապաղ մարվում է:

Ընտրողը մոտենում է քվեատուփի համար պատասխանատու անդամին, որը ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեաթերթիկը գցելու քվեատուփի մեջ:

Տեղամասային կենտրոնի փակումը

Ժամը 20:00 -ին հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության ավարտի մասին և

✓ արգելում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ.

✓ քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս.

✓ փակում է քվեատուփի ճեղքը.

✓ փակում է տեղամասային կենտրոնը:

Քվեարկության արդյունքների ամփոփումը

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է քվեարկության սենյակում: Քվեարկության արդյունքների ամփոփումն սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և ընթանում առանց ընդհատման մինչև քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմումը:

Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում կատարվում են հետևյալ գործողությունները`

1. հաշվարկվում է չօգտագործված, ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված (վնասված) և հետ տրված քվեաթերթիկների ընդհանուր թիվը.
2. հաշվարկվում է ընտրողների յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակի (այդ թվում` քվեարկության օրն հանրաքվեի տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակի) ընտրողների թիվը` առանձին-առանձին, ստացվում է հանրաքվեի տեղամասում ընտրողների ընդհանուր թիվը.
3. հաշվարկվում և արձանագրվում է քվեարկության մասնակիցների թիվը ընտրողների ցուցակներում (այդ թվում` լրացուցիչ ցուցակներում)` ընտրողների ստորագրությունների հիման վրա.
4. տեսակավորվում են քվեաթերթիկները.

Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը: Քվեատուփից հանում է մեկ քվեաթերթիկ: Հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում նաև, թե ինչպես է քվեարկված, ապա ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի արտահայտած կարծիքին համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում

քվեարկության արդյունքով (քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և եթե հանձնաժողովի անդամի առաջարկությունը քվեարկությամբ չի ընդունվում, ապա ընդունված է համարվում հանձնաժողովի նախագահի առաջարկությունը), իսկ առարկություն չլինելու դեպքում հանձնաժողովի նախագահը, իր հայտարարության համաձայն, ըստ քվեաթերթիկում կատարված քվեարկության նշումի, քվեաթերթիկը դնում է «Կողմ են» կամ «Դեմ են» քվեարկված քվեաթերթիկների հետ կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ քվեաթերթիկը:

Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկների համար:

Քվեաթերթիկների վավերականությունը

Սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

✓ միաժամանակ «կողմ են» և «դեմ են» բառերի դիմաց նշումներ է ներառում.

✓ որևէ նշում չի ներառում.

✓ բացի քվեարկության համար հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի սահմանած կամ դրան նմանվող նշանից ներառում է այլ՝ ընտրողի ինքնությունը բացահայտող նշում.

✓ քվեաթերթիկի վերին աջ անկյունում ՅՏՅ կնիքով կնքված չէ.

✓ հանրաքվեի հանձնաժողովի 3 անդամի կողմից քվեաթերթիկի հակառակ կողմում ստորագրված չէ.

✓ ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը:

Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա:

Տեսակավորման ողջ ընթացքում հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ և նշումներ կատարելու այլ առարկաներ:

5. հաշվարկվում և հրապարակվում են.

- կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
- դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
- անվավեր քվեաթերթիկների թիվը
- անճշտությունների գումարային չափը:

Հաշվարկված թվերը հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում:

Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները հանրաքվեի տեղամասային հանձնաժողովը կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ թիվ 1 (ամփոփիչ) արձանագրություն, իսկ դրա հիման վրա՝ թիվ 2 (անճշտությունների չափի վերաբերյալ) արձանագրություն: Արձանագրությունների կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից ***ոչ ուշ, քան 12 ժամ*** հետո:

Քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան **14 ժամվա** ընթացքում, հանրաքվեի տարածքային հանձնաժողով են ներկայացվում.

✓ հանրաքվեի փաստաթղթերի կնքված ընդհանուր փաթեթը (քվեաթերթիկներ, ընտրացուցակներ, ՀՏՀ արձանագրությունների 1-ական օրինակներ),

✓ քվեարկության արդյունքների վերաբերյալ թիվ 1 և թիվ 2 արձանագրությունների 2-ական օրինակները,

✓ հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանը,

✓ հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի կնիքը,

✓ քվեատուփը /քվեատուփերը, շրջիկ արկղը/,

✓ քվեարկության խցիկները

✓ հանրաքվեի և ընտրական գրականությունը :

Հանրաքվեի փաստաթղթերը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահը և քարտուղարը հանրաքվեի տարածքային հանձնաժողով են տեղափոխում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ:

Հանրաքվեի փաստաթղթերը հանրաքվեի տարածքային հանձնաժողովում հանձնվում և ընդունվում են հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:

Հանրաքվեի տարածքային հանձնաժողովի գործողությունները հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների արձանագրությունները ստանալուց հետո

Հանրաքվեի տարածքային հանձնաժողովում ստուգվում է հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը, իսկ թվաբանական սխալների առկայության դեպքում հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:

! Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:

Հանրաքվեի տարածքային հանձնաժողովում նշում է կատարվում տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների ընդունման ամսաթվի և ժամանակի մասին, ինչը վավերացվում է հանրաքվեի տարածքային հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով:

Հանրաքվեի տարածքային հանձնաժողովը համեմատում է հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի կնիքի համարը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի արձանագրության կնիքի համարի հետ:

Հանրաքվեի ժամանակ հանրաքվեի տարածքային հանձնաժողովը պարբերաբար, բայց **ոչ ուշ, քան 3 ժամը մեկ** կատարում է տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ հանրաքվեի տեղամասերի:

Հանրաքվեի տարածքային հանձնաժողովի կողմից հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների աղյուսակավորումն ավարտվում է քվեարկության ավարտից հետո՝ **ոչ ուշ, քան 12 ժամվա** ընթացքում:

Հանրաքվեի արդյունքների ամփոփում

Հանրաքվեի տարածքային հանձնաժողովներից ստացված՝ հանրաքվեի նախնական արդյունքների հիման վրա, հանրաքվեի **նախնական արդյունքները** հրապարակվում են քվեարկության ավարտից **ոչ ուշ, քան 28 ժամվա ընթացքում**:

Հանրաքվեի արդյունքներն ամփոփվում և դրա վերաբերյալ **վերջնական որոշում** ընդունվում է քվեարկության ավարտից **ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում**, իսկ բողոք լինելու դեպքում՝ **6 օր հետո**:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նորմատիվ և անհատական որոշումները տեղադրված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում **www.cecncr.am**: